



2015թ.

«Հաստատում են»
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
Վազա Ասրյան



2015թ.

ԼՂՀ ԿԱ սպորտի և երեխաների հարցերի նախագահի
Վահագն Զոհաբեկյան



2015թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԼՂՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ԼՂՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության նպատակներն ու խնդիրներն են՝
 - 1/ մատաղ սերնդի շրջանում խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը՝ ի նպաստ աշակերտների համակողմանի ու ներդաշնակ դաստիարակության.
 - 2/ դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորումը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակումը.
 - 3/ դպրոցականների ֆիզիկական կարողությունների և ունակությունների դիտարկումը.
 - 4/ ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների և ընտրողների միջև անմիջական կապերի ամրապնդումը.
 - 5/ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, շրջանային կազմակերպությունների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքների խթանումը:

2. ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

ԼՂՀ ԱԺ գավաթի խաղարկությունն անց է կացվում ԼՂՀ Ազգային ժողովի հովանու ներքո: Ընդհանուր ղեկավարումն ու աշխատանքների կորդինացումը իրականացնում է ԼՂՀ ԱԺ-ի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, իսկ անմիջական ղեկավարությունն իրականացնում են ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը, ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեն:

3. ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԸ

ԼՂՀ ԱԺ-ի գավաթի խաղարկությանը մասնակցում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 3-6-րդ դասարանների աշակերտները՝ բժշկի թույլտվությամբ: Հանրապետական եզրափակիչ 3-րդ փուլին թույլատրվում է նույն դպրոցի հաղթող դասարանները համալրել զուգահեռ դասարանների աշակերտներով:

4. ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԼՂՀ ԱԺ-ի գավաթի խաղարկությունն անց է կացվում երեք փուլով 2014-2015թթ. ուսումնական տարվա ընթացքում: Մրցումների ծրագրում ընդգրկված են.

3-րդ դասարան

1. վազք 30մ/վրկ/ բարձր մեկնարկից
2. թենիսի գնդակի նետում /մետր/ թափավազքից
3. հեռացատկ տեղից /սմ/ երկու ուտքով
4. ձգումներ կախ դրությունից /անգամ/-տղաներ
5. ձգումներ կախ պառկած դրությունից /անգամ/- աղջիկներ
6. փոխանցումավազք 4x50 մետր

4-6-րդ դասարան

1. վազք 60մ/վրկ/ բարձր մեկնարկից
2. վազք 500մ/վրկ/
3. հեռացատկ թափավազքից /մ/
4. ձգումներ կախ դրությունից /անգամ/-տղաներ
5. ձգումներ կախ պառկած դրությունից /անգամ/-աղջիկներ
6. թենիսի գնդակի նետում /մետր/ թափավազքից
7. փոխանցումավազք 3-6-րդ դասարանցիների համար

Փոխանցումավազքը անց է կացվում չորս վազքահերթով նախատեսված 100մ վազքուղու հատվածում:

Մասնակիցներ՝ յուրաքանչյուր դասարանից մեկական աշակերտ /2 տղա, 2 աղջիկ/:

Առաջին մասնակիցը ձեռքի հպումով փոխանցում է երկրորդ մասնակցին, նույն կարգով կատարում են 3-րդ և 4-րդ մասնակիցները:

1-ին վազքահերթ- 25մ, վազք ցատկապարանով /աղջիկ/

2-րդ վազքահերթ- 25մ, ուստյուններ պարկերով /տղա/

3-րդ վազքահերթ- 25մ, վազք օղակով /աղջիկ/

4-րդ վազքահերթ- 25մ, բասկետբոլի գնդակի վարում մեկ ձեռքով, երկու ուղղահայաց արգելքներ շրջանցելով /տղա/: Արգելքների հեռավորությունը միմյանցից՝ մեկ մետր:

1-ին փուլ- միջդասարանային մրցումներ

Ժամկետը՝ մարտ 2015թ.:

Մասնակիցները՝ հանրակրթական դպրոցների 3-6-րդ դասարանի աշակերտները:

Միավորների հաշվարկը՝ յուրաքանչյուր դասարանից 4-ական աշակերտի կողմից ցույց տրված լավագույն արդյունքների հանրագումարով:

Պատասխանատու՝ դպրոցի տնօրինություն և նրա կողմից հաստատված մրցավարական հանձնախումբ:

1-ին փուլի արձանագրությունները 7-օրյա ժամկետում նարկայացվում է Ստեփանակերտի քաղաքապետարանի, շրջանների վարչակազմերի կրթության և սպորտի բաժիններին, համաձայն թիվ 1 հավելվածի /կցվում է/:

2-րդ փուլ- շրջանի /քաղաքի/առաջնության մրցումներ

Ժամկետը՝ ապրիլ 2015թ.

Մասնակիցները՝ հանրակրթական դպրոցների առաջնություններում հաղթած 3-6-րդ դասարանները թվով 4-ական աշակերտ /2 տղա, 2 աղջիկ/, ֆիզկուլտուրայի ուսուցիչը, դասվարը կամ դասղեկը:

Միավորների հաշվարկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Պատասխանատու՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի, շրջանների վարչակազմերի կրթության և սպորտի բաժիններ:

2-րդ փուլի արձանագրությունները 7-օրյա ժամկետում ներկայացվում են ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ռազմահայրենասիրական, ֆիզիկական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժին՝ համաձայն թիվ 1 հավելվածի /կցվում է/:

3-րդ փուլ- հանրապետական մրցումներ

Ժամկետը՝ մայիսի 25-27-ը 2015թ., ժամանման օրը մայիսի 25ին:

Մասնակիցները՝ 3-րդ փուլին մասնակցում են շրջանային /քաղաքային/ առաջնություններում հաղթած 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ դասարանները՝ թվով 4-ական աշակերտ /2 տղա, 2 աղջիկ/, մեկ ֆիզկուլտուրայի ուսուցիչ և մեկ դասուղեկ կամ դասվար: Ընդամենը 18 հոգի /16 մասնակից, 2 ղեկավար/:

Միավորների հաշվարկը՝ համաձայան թիվ 2 հավելվածի:

ԼՂ Ազգային ժողովի գավաթը խաղարկվում է շրջանների /քաղաքի/ 3-6-րդ դասարանների աշակերտների կողմից հավաքած միավորների հանրագումարով:

ԼՂ ԱԾ փոխանցիկ գավաթի խաղարկության հաղթած դասարանները կմասնակցեն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գավաթի խաղարկության եզրափակիչ մրցումներին:

3-րդ փուլի մասնակիցների /ճանապարհածախսի, օրապահիկի, գիշերավարձի, մրցավարական և սպասարկող անձնակազմի/ վճարման ծախսերը հոգում է ԼՂ կրթության և գիտության նախարարությունը:

5. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

1-ին փուլում հաղթող 3-6-րդ դասարանների աշակերտները պարգևատրվում են դպրոցների տնօրենների կողմից:

2-րդ փուլում 3-6-րդ դասարանների մրցումներում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դասարանների աշակերտները պարգևատրվում են շրջվարչակազմերի /Ստեփանակերտի քաղաքապետարանի/ հավաստագրերով և ԱԾ պատգամավորների կողմից սահմանված մրցանակներով:

3-րդ փուլում 1-ին տեղ գրաված շրջանի /քաղաքի/ թիմը պարգևատրվում է ԼՂ ԱԾ-ի փոխանցիկ գավաթով և պատվոգրով, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերը պարգևատրվում են ԱԾ հուշանվերներով և պատվոգրերով:

ԼՂ Ազգային ժողովի փոխանցիկ գավաթը երեք տարի անընդմեջ շահած թիմին ԱԾ փոխանցիկ գավաթը հանձնվում է մշտապես:

Հաղթող թիմերը պարգևատրվում են ԼՂ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված դիպլոմներով, արժեքավոր նվերներով, իսկ հաղթող դասարանները՝ պատվոգրերով և դրամական պարգևներով: Յուրաքանչյուր մարզաձևից լավագույն արդյունք ցուցաբերած մեկական տղա և աղջիկ պարգևատրվում են նախարարության պատվոգրերով: Նախարարության կողմից խրախուսվում են նաև հաղթող դասարանների ուսուցիչները:

Մրցումներում անհատական հաշվարկով 1-3-րդ տեղեր գրաված դպրոցականները պարգևատրվում են ԼՂ Ազգային ժողովի կողմից՝ հուշանվերներով, ԼՂ կրթության և գիտության նախարարության կողմից՝ պատվոգրերով:

Եզրափակիչ փուլի յուրաքանչյուր դասարանի լավագույն աշակերտները պարգևատրվում են ԼՂ ԿԱ սպորտի պետական կոմիտեի կողմից սահմանված պատվոգրերով և դրամական պարգևներով:

Փոխանցիկ

հուշանվերներով:

6. ՀԱՅՏԵՐ

Մրցումների եզրափակիչ փուլի հայտերը պահանջվող կարգի համապատասխան /արձանագրություն, անհատական քարտ՝ բժշկի թույլտվությամբ, հաստատված դպրոցի տնօրենի կողմից/ ս.թ. մայիսի 25-ին ներկայացնել ԼՂ կրթության և գիտության նախարարության ռազմահայրենասիրական, ֆիզիկական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժին:

Յուրաքանչյուր մասնակից պարտավոր է իմանալ ԼՂ օրհներգի տեքստը և կատարել այն ամբողջությամբ: